

ՄԱՏԱԹԻԱ ԳԱՐԱԳԱՇՅԱՆԸ ԵՎ ԻՐ «ՆԿԱՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՍԱՏՈՒՐ ՓԱՇՏԱՅԱՆ

Հայ քննական պատմագրություն հիմնադիր Մատթիա Գարագաշյանի անունը XIX դ. 30-ականներից հաստատապես ամրագրված է Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում:

Ձափազանց ընդգրկուն են Մ. Գարագաշյանի գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ պատմություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, թարգմանչական գործունեություն: Սրան հավելենք նաև նրա խմբագրական և մանկավարժական շուրջ կեսդարյա բեղմնավոր գործունեությունը: Մ. Գարագաշյանի կյանքը, գիտամանկավարժական գործունեությունը ներկայացված են մեծ թվով ուսումնասիրություններում¹:

Մ. Գարագաշյանը (Անտոն Բերբերյան) ծնվել է 1818 թ. փետրվարի 11-ին Կ. Պոլսում, ուր և ստացել է նախնական կրթությունը: 1832–1856 թթ. նա Վիեննայի Մխիթարյանների վանքում էր, ուր և 1836 թ. դարձել է հիշյալ միաբանության անգամ, իսկ 1840-ին ձեռնադրվել կուսակրոն քահանա:

Իբրև Մխիթարյան միաբանության անգամ, մինչև 1856 թ. ծավալել է գիտամանկավարժական արգասավոր գործունեություն: Լինելով Վիեննայի Մխիթարյան միաբանության կարկառուն դեմքերից մեկի՝ պատմաբան, թարգմանիչ և լեզվաբան Հովսեփ Գաթրոճյանի (1820–1882) ավագ ընկերն ու գաղափարակիցը, Մ. Գարագաշյանն առաջիններից մեկն

¹ Դ. Խ ա չ կ ո ն ջ, Ա. Մ. Գ ա ռ ա գ ա շ յ ա ն. Կենսագրական մատենախոսական, «Բյուրական», 1900, №11: Բ. Ք ե չ յ ա ն. Մադաթիա Գարագաշյան.— «Բյուրական», 1903, №2183: Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Անհետացող գեմքեր. Ա. Մ. Գարագաշյան.— «Բյուրական», 1903, №2185: Յուշարձան. Վիեննա, 1911, էջ 26: Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Դեմքեր. Հ. 2, Փարիզ, 1929, էջ 78-91: Ն. Ա կ ի ն յ ա ն. Հ. Յ. Գաթրոճյանի ուսումնակիցներն ու աշակերտները.— «Հանդես ամսօրյա», 1932, հունվար-փետրվար: Ն. Ա կ ի ն յ ա ն. Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը. Վիեննա, 1932, էջ 278-311: Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ. Երևան, 1960, էջ 69-72: Գ. Բ ռ ու տ յ ա ն. Գարագաշյանի ուսմունքը տրամաբանության մասին.— «Երևանի պետհամալսարանի գիտական աշխատանքների տեղեկագիր», հ. 60, 1962: Հ. Շ ա ք ա ռ յ ա ն. Ա. Մ. Գարագաշյանի աշխարհայացքը. Երևան, 1962: Ա. Թ կ ո ս յ ա ն. Ա. Մ. Գարագաշյանի փիլիսոփայական և տրամաբանական հայացքները. Երևան, 1962: Հ. Ա ճ ա ո յ ա ն. Կյանքիս հուշերից. Երևան, 1967, էջ 96-98: Հ. Դ ա վ թ յ ա ն. Հայ գիրքը 1800-1850 թվականներին. Երևան, 1971, էջ XXI: Հ. Գ ա թ ռ ի ե լ յ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն. Երևան, 1976, էջ 293-306: Է. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Հայ փիլիսոփայական միտքը XIX դարի առաջին կեսին. Երևան, 1965, էջ 158-183: Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան. Հ. Ա, Երևան, 1973, էջ 235: Ա. Փ ա շ ա յ ա ն. XIX դարի քիմիան Հայ բնագետների աշխատություններում. Երևան, 1992, էջ 16-17:

էր, որ որդեգրեց Հ. Գաթրըճյանի առաջագրած դասական հայերենի գաղափարը²:

1844 թ. Մ. Գարագաշյանը Վիեննայում լույս է րնծայել «Ճարտասանութիւնը», իսկ 1845-ին՝ «Նկարագիր ուսմանցը»: Այնուհետև դասական հայերենի վերածել Մաղաքիա Սամուելյանի «Ուսումն փրկիսոփայութեան» աշխատութիւնը:

1848-ին Մ. Գարագաշյանը Վիեննայից մեկնել է Թրիեստ, այնտեղից՝ Զմյուռնիա, ուր դասավանդել է տեղի Մխիթարյանների վարժարանում: 1856-ին Մ. Գարագաշյանի կյանքում կտրուկ շրջադարձ է կատարվել: Շուրջ քսան տարի (1836–1856) Վիեննայի Մխիթարյան միաբանութեան անդամ լինելուց հետո նա 1856-ին հրաժարվել է կրոնին ծառայելուց. «Մ. Գարագաշյանը հայ իրականութեան մեջ առաջին մտածողն է, որ հրապարակորեն իրեն մատերիալիստ է համարել»³:

1856-ից մինչև կյանքի վերջը՝ 1903 թ., շուրջ կես դար, Մ. Գարագաշյանը հայագիտութեանն առնչվող առարկաներ է դասավանդել ծննդավայրի՝ Կ. Պոլսի տարբեր դպրոցներում և վարժարաններում: Կեդրոնական վարժարանում նրան աշակերտել են Արշակ Չոպանյանը (1872–1954), Հրաչյա Աճառյանը (1876–1953), Արմենակ Իփեքչյանը (1871–1965), Օննիկ Զիֆթե-Սարաֆը (1874–1832), Հովհաննես Արթինյանը (1874–1851), Միքայել Շամտաճյանը (1874–1926) և ուրիշ ականավոր մտավորականներ: Ահա թե ինչպես է ներկայացրել իր երբեմնի ուսուցչին Հ. Աճառյանը. «Գարագաշը Վիեննայի Մխիթարյան միաբանութեան անդամներից էր: Նա ոսկեդարյան հայերենի գյուտի առաջին հեղինակներից էր: Ավելի ուշ նա հարելով Բյուխսների նյութապաշտ (մատերիալիստական) փրկիսոփայութեան, թողել էր սքեմը և աշխարհական էր դարձել: Գրաբարը գիտեր այնպես, ինչպես ոչ ոք չգիտեր»⁴:

Հոդևորականի սքեմից հրաժարված աշխարհական Մ. Գարագաշյանը շուրջ քառասուն տարում հրատարակել է երեք տասնյակից ավել մենագրութիւններ, դասագրքեր, թարգմանութիւններ: Աշխատակցել է «Զեփյուռ», «Մասիս», «Սեր», «Երկրագունդ», «Թերեֆման էֆքյուր» պարբերականներին, խմբագրել «Ճաշակ ոսկեղեն դպրութեան» ամսագիրը⁵:

² Հայտնի է, որ գրաբարի տարբեր շրջանների մատենագրութեան լեզուն մանրամասն ուսումնասիրելով՝ Մխիթարյան միաբանութեան ականավոր հայագետներից մեկը՝ Հ. Գաթրըճյանը, հանգեց այն եզրակացութեան, թե հինգերորդ դարի առաջին կեսի (մինչև 60-ական թվականների) լեզուն նկատելի տարբերութիւններ ունի հետագա շրջանի լեզվից: Այս նկատուածը հանգեցրեց դասական գրաբարի (գասական հայերենի, ոսկեդարյան հայերենի) և ետդասական գրաբարի (ետոսկեդարյան հայերենի) տարբերացմանը: Այս բաժանումը չափազանց խիստ է կատարված և իրավամբ որոշ հայերենագետներ չեն ճանաչում:

³ Հ. Շ ա ղ ա ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 50:

⁴ Հ. Ա ճ ա ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 96:

⁵ 1886–1887 և 1889-ին Կ. Պոլսում լույս տեսած հիշյալ ամսագրի էջերում ընթերցողին են ներկայացվել մատենագիտական, բանասիրական, լեզվաբանական, պատմական հոգվածներ, հայ և օտար՝ Լամարթին, Հյուգո, Լաֆոնտեն, Վոլտեր, Ռասին, Ֆենելոն և ուրիշներ, հեղինակների ստեղծագործութիւններ, առակներ, աշխարհագրական տեղեկութիւններ: Ունեցել է գրաբար-աշխարհագր բառարանային բաժին:

Մ. Գարագաշյանի պատմագիտական հայացքները հիմնականում դրսևորվել են «Քննական պատմություն հայոց» աշխատությունում⁶: Հիշյալ գործում նա պատմական, լեզվաբանական և բանասիրական աղբյուրների կիրառմամբ քննարկել է հայ ժողովրդի ծագումից մինչև հինգերորդ դարի ազատագրական շարժումների ավարտը (484 թ.) ընկած ժամանակահատվածը: Հեզինակը հայ և օտար մատենագիտական սվյալները նախ գիտական բարձր մակարդակով ենթարկել է աղբյուրագիտական և քննական վերլուծության և ապա ճշգրտել ու քննել պատմական տարաբնույթ երևույթները: Մ. Գարագաշյանի պատմական, լեզվաբանական, փիլիսոփայական և սրամաբանությունը նվիրված աշխատությունները լուսաբանված են հավուր պատշաճի⁷:

1845 թ. Վիեննայի Մխիթարյանների տպարանում գրաբար լույս է տեսել Մատթիա Գարագաշյանի «Նկարագիր ուսմանց որ է բնութիւն, պատմութիւն և օգուտ իւրաքանչիւր մասանց գրագիտութեան» (այսուհետև՝ «Նկարագիր ուսմանց») իր տեսակի մեջ խիստ յուրօրինակ 364 էջանոց աշխատությունը: Այն, ն. Ակինյանի ղեկով բնութագրմամբ, «Նկարագրությունն է գիտություններու, անոնց ներքին բովանդակությամբ և արտաքին պատմությամբ»⁸:

«Նկարագիր ուսմանց»-ն իր բնույթով առաջինն է հայ տպագիր գրականության մեջ: 16 տարի անց, դարձյալ Վիեննայում, այս անգամ արդեն աշխարհաբարով, հրատարակվել է մեկ այլ դիրք⁹, բովանդակությամբ շատ մոտ «Նկարագիր ուսմանց»-ին:

Աշխատությունը բացվում է փոքրածավալ առաջաբանով, ուր հեղինակը հիմնավորել է գրքի նպատակը և խնդիրները: Առաջաբանում Մ. Գարագաշյանն իր երախտագիտությունն է հայտնել Արամյան ընկերությունը¹⁰, որն օժանդակել է գրքի լույս ընծայմանը. «Արամեան ընկերութիւնս, որ զուշ իւր ի միջավայր կամ մանաւանդ ի գլուխ անդր գրագիտութեան, ի դպրոցս ասեմ եւ իմ հրահանգս եւ ի տիեզերական դպրոցս (universite)՝ ձգեալ ունի, եւ գոգ ի նոցին պաշտպանութիւն եւ յօգնականութիւն գիտութեալ է, ոչ գայմ է իմեքէ այնպէս պատշաճագոյն դատեցաւ զիւր երախտարիս՝ ակնկալութեան իւրոցն խնամածուաց մատուցանել, որպէս զհամօրէն զամենայն ուսմանց զպատկեր իւրաքանչիւր նոցին բնաւորն երանգօք ի նկարու հանեալ մատուցանել»:

Առաջաբանին հաջորդում է շուրջ 50 էջանոց «Պատրաստութիւն» ներածականը, որն ամբողջովին նվիրված է դրին, լեզվին, թարգմանական գործին: Մ. Գարագաշյանը հիշյալ ներածականում մեծ տեղ է հատ-

⁶ Աշխատության միայն Ա մասը (282 էջ) առաջին անգամ հրատարակվել է Կ. Պոլսում 1880-ին: Աշխատությունն ամբողջությամբ (Ա. Բ, Գ և Դ մասերը, ընդհանուր ծավալը 1224 էջ) լույս է տեսել Թիֆլիսում, 1895 թ.:

⁷ Ն. Ա կ ի ն յ ա ն. Դասական հայերենը և Մխիթարյան դպրոցը. Վիեննա, 1932, էջ 278-311: Գ. Բր ու լ տ յ ա ն. նշվ. աշխ.: Հ. Շ ա ք ա ը յ ա ն. նշվ. աշխ., Ա. Թ և ո ս - յ ա ն. նշվ. աշխ., Հ. Գ ա բ ը ի ն յ ա ն, նշվ. աշխ.:

⁸ Ն. Ա կ ի ն յ ա ն. Հ. Յ. Գաթրճյանի ուսումնականիցներն ու աշակերտները, էջ 73:

⁹ Ե. Գ ա ֆ տ ա ն ճ ե ա ն. Բովանդակություն գիտությունների և արտեստից. Վիեննա, 1861, 186 էջ:

¹⁰ Մխիթարյան հրատարակչական գործունեությունը ծավալած «Արամյան ընկերությունը» կազմակերպվել է Վիեննայի Մխիթարյան միաբանությունում 1843 թ.: Մանրամասն տես Ն և ո. Երկերի ժողովածու տասը հատորով. հ. 4, Երևան, 1984, էջ 538:

կայրել մասնավորապես V դ. դասական հայերենին: Մ. Գարագաշյանը, ինչպես նշեցինք, առաջիններից մեկն էր, որ դասական գրաբարի գաղափարը «Նկարագիր ուսմանը»-ում դրել է գիտական շրջանառության մեջ: Քննարկելով Մ. Գարագաշյանի նշված աշխատությունը՝ Ն. Ալիսյանը հատկապես կարևորել է հեղինակի այդ ներդրումը հայագիտության մեջ. «Եթե յուրաքանչյուր գլուխ ունի յուր հրավույրը, և բովանդակ մատյանն կը ներկայանա դասագիրք մը հայերեն դասական լեզվի (ընդգծումը մերն է – Ա. Փ.), բայց հատկապես էջ 25–46 արժանի է մասնավոր ուշադրության, ուր «Հայ բարբառը» յուր դասական դարուն և հեա դասական շրջաններուն նկատի կառնվի և առաջին անգամ հրապարակին լսելի կըլլա Վիեննական դպրոցի տեսությունը հայերեն լեզվի շրջաններու մասին»¹¹:

«Նկարագիր ուսմանը»-ի առաջին մասը նվիրված է դեղեցիկ ուսմունքին՝ դպրություն կամ քերականություն, բանաստեղծություն կամ վիպասանություն, ճարտարախոսություն, պատմություն, սիեզերական պատմություն, եբրայական պատմություն, տոհմային պատմություն, հռոմայեցի պատմություն, ժամանակախոսություն և երկրագործություն:

Նշված բաժնում միայն «Տոհմային պատմություն» գլխում, այն էլ շատ հստակեցիկ, կա ակնարկ հայոց պատմության V դ. առնչվող. «Բայց դառաւելագոյն խնամ յանձին կալաւ, նա հաստատիչ իսկ պատմութեան Հայոց դտաւ Սահակ Բագրատունի, յորոյ խնդրելոյ եկն Մովսէս Խորենացի ի գրել զիւր նշանաւոր պատմութիւն, որով ոչ միայն Մար. Աբասսացն հաստակոտոր պատմութիւն անկորուստ պահեցաւ, այլ եւ բովանդակ տոհմային պատմութիւն ի վեր երեւեցաւ: Նոյնպէս Ագաթանգեղոս քաջ ատենադպիր Տրդատոյ դրեաց զիւր պատմութիւն ի նորին խնդրոյ, եւ Եղիշէ եւ այլք բազումք»¹²:

Մեզ առավել հետաքրքրեց Մ. Գարագաշյանի հիշյալ գրքի երկրորդ մասը, որը վերնագրված է «Գիտությունք»: Ըստ Գարագաշյանի, գիտությունները ընդգրկում են 10 բնագավառներ.

Ա գլուխը հիշյալ բնագավառներից ընդգրկում է միայն մաթեմատիկա՝ սուղողություն, համարողություն՝ թվաբանություն, նշանագրովք համարողություն և երկրաչափություն:

Բ գլուխը ներառում է իր մեջ «Փիլսոփեան» գիտությունը, «Մեքենական» ուսումն և «Քիմիական» ուսումն:

Մինչև Մ. Գարագաշյանի հիշյալ գրքի լույս աեսնելը բնագիտությունը նվիրված որևէ հայատառ տպագիր աշխատությունում «Փիլսոփեան» տերմինին չէինք հանդիպել: «Նկարագիր ուսմանը»-ում այն ներկայանում է նաև միջազգային հնչողությամբ կիրառվող «Ֆիզիկա» ձևով¹³: Հ. Աճառյանի կարծիքով «Փիլսոփեան» բառն առաջին անգամ հանդիպում ենք XIII դ. պատմիչ-ժամանակագիր Սամուել Անեցու ժամանակագրական բնույթի պատմական երկում¹⁴: Ի տարբերություն «Փիլսոփեան» (Ֆիզիկա)

¹¹ Ն. Ալիսյան. Դասական հայերենը և Վիեննական Միլթարեսն դպրոցը. Վիեննա, 1932, էջ 273:

¹² Մ. Գարագաշյան. Նկարագիր ուսմանը. Վիեննա, 1845, էջ 143:

¹³ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 4, Երևան, 1970, էջ 506:

¹⁴ Սամուելի քահանայի Անեցույ հաւաքմունք ի գրոց պատմագրաց. յաղագս գիւտի ժամանակաց անցիւոց ի ներկայս ծաղկաքաղ արարեալ. Վաղարշապատ, 1893, էջ 52:

տերմինի, հիշյալ գործում Մ. Գարագաշյանը միշտ կիրառել է քիմիա, քիմիական տերմինները: Տպագիր հայատառ դրականություն մեջ քիմիա բառն¹⁵ առաջին անգամ հանդիպում ենք Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների հանրագիտարանային բնույթի աշխատությունում¹⁶, որը հետագայում ներառվել է Վենետիկի Մխիթարյանների լույս ընծայած «էֆեմերտէ»-ում¹⁷:

Իսկ XIX դ. տպագիր հայատառ դրականություն մեջ «Քիմիա» բառն առաջին անգամ հանդիպում ենք Վենետիկի Մխիթարյան միաբանությունից ալանավոր գործիչներից մեկի՝ Իգնատիոս Փափագյանի աշխատություններից մեկում¹⁸:

Ահա ինչպես է ներկայացրել քիմիան Մ. Գարագաշյանը XIX դ. առաջին կեսին. «Յորժամ քիմիական ուսումն ասիցի, յայտ առնի այն ուսումն, որ զբնութիւն մարմնոց, կամ մանաւանդ զհանգամանս ազդեցութեանցն՝ զորս էական մասունք կազմածոյ մարմնոց ի միմեանս գործեն, ճանաչել ուսուցանէ: Քիմիական ուսումն ի պէսպէս ժամանակս ազգի յորջորջանս էառ. ոմանք ճարտարութիւն հրոյ անուանեալ կոչէին, այլք ոսկեգործութիւն, արծաթարարութիւն. կէսք եւս փիւսկեան անուն եղին. եւ արդարեւ իսկ այնչափ նմանութիւն է սորա ընդ փիւսկեան ուսման, եւ այնպէս գիրկընդխառն է ընդ նմա, զի չէ մարթ զմին զատ եւ ուրոյն ի միւսմէ անտի ուսանել: Զոր. օրինակ փիւսկեան ուսումն զաղդեցութիւնս մարմնոց ի զանգուածս կամ ի թանձրութեան (masse) նոցա քննէ, նոյնպէս քիմիական ուսումն զազդեցութիւնս նոցին ի նոցին մասունս՝ որ զնոսա յօրինեալ կազմիցեն հետադոտէ»¹⁹:

Բերված հատվածում դիտական մեծ և ընդգրկուն միտք է արծարծված: Խնդիրն այն է, որ մինչև XIX դ. կեսերը բնական գիտությունները դեռևս հստակ տարանջատված չէին մեկը մյուսից: Այսպես, 1842-ին Վիեննայում լույս տեսած Մխիթարյան միաբանությունից անդամ Մատթեոս Սաղաթելյանի՝ աշխարհաբարով դրված 528 էջանոց «Համառօտ բնական գիտութիւն»-ում միատեղ քննարկված են ֆիզիկան և քիմիան:

Մ. Գարագաշյանը քիմիան և ֆիզիկան, առաջին անգամ հայ բնագիտությունից պատմություն էջերում գիտել է ինչ-որ տեղ միասնական, քանի որ դրանք շատ հաճախ անդրադառնում են միևնույն խնդիրներին: Այդ իմաստով դրանք վարդապետ մտածողի դիպուկ բնութագրմամբ «գիրկընդխառն» են: Այո, XIX դ. կեսերին ֆիզիկան և քիմիան այնքան էին միահյուսվել բնական երևույթները մեկնաբանելու շատ ու շատ հարցերում, որ արդեն քիմիայի նորաստեղծ ճյուղերից մեկը՝ ֆիզիկական քիմիան, որն այսօր աշխարհի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվում է որպես առանձին գիտություն, սկսում էր ձևավորվել որպես ինքնուրույն գիտություն:

¹⁵ Ա. Փ ա շ ա յ ա ն. «Քիմիա» տերմինը հայ մատենագրությունից մեջ. - «Հայկական քիմիական ամսագիր», 1998, №3-4, էջ 241-243:

¹⁶ Մ ա տ թ է ո ս և Ղ ու կ ա ս Վ ա ն ա ն դ ե յ ի. Բնաբանություն լուստատարական կամ տարեդաբանություն. Ամստերդամ, 1702, 120 էջ:

¹⁷ Գրգուկ որ կոչի էֆեմերտէ. Վենետիկ, 456 էջ:

¹⁸ Ի. Փ ա փ ա զ յ ա ն. Մանրանկարք որ է Մխիթարթուս. Վենետիկ, 1813:

¹⁹ Մ. Գ ա ռ ա գ ա շ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 265:

Ասվեց, որ *Բ* գլխում ընդգրկված է «Մեքենական ուսումն», որն այսօրվա «Մեխանիկա» գիտությունն է: *Մ*. Գարագաշյանը հայ իրականություն մեջ առաջինն է, որ մեխանիկան XIX դ. 40-ական թվականներին դիտել է որպես ինքնուրույն գիտություն:

Ահա թե ինչպես է սկսվում Սովետական Հայաստան հանրագիտարանի «Մեխանիկա» բաժինը. «Սովետական Հայաստանում մեխանիկայի բնագավառում կատարված գիտական առաջին հետազոտությունները (1920–30-ական թթ.) կապված են Հ. Անժուրի (Չեքոտարյան), Ա. Հակոբյանի, Ա. Տեր-Մկրտչյանի անունների հետ, որոնք զգալի ավանդ ունեն չՍՍՀ-ում գիտական կադրերի պատրաստման, բուհերում մեխանիկայի հարցերով զբաղվող ամբիոնների և լաբորատորիաների կազմակերպման դործում»²⁰: Հիշյալ հանրագիտարանում ներկայացված բնական և ճշգրիտ գիտությունների մեծ մասը (մաթեմատիկա, կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա) սկսվում է պատմական ակնարկով, բայց մեխանիկային նվիրված բաժնում մեկ տող անգամ չկա *Մ*. Գարագաշյանի հիշյալ գրքի մասին:

Վերը նշված «Մեխանիկա» բաժինը ներկայացրած Վ. Գնունին և Գ. Բաբաջանյանը եթե ծանոթ չեն եղել *Մ*. Գարագաշյանի «Նկարագիր ուսմանը»-ին, ապա հիշյալ հուշվածը գրելուց առաջ ՀՀ Ազգային զբաղարանում կարող էին թերթել 1872 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության տպարանում տպագրված *Մ*. Քաջունու²¹ 569 էջանոց աշխարհագրորդ գրված «Մեքենականություն տեսական և գործնական» 370 նկար-պատկերներ պարունակող կոթողային աշխատությունը: Այլապես ընթերցողի մոտ ձևավորվում է այն մտայնությունը, որ հայերս մինչև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելը մեխանիկային նվիրված որևէ ուսումնասիրություն չենք ունեցել: Մինչդեռ XIX դ. առաջին կեսին *Մ*. Գարագաշյանն ահա թե ինչպես է սահմանել այդ գիտությունը. «Մեքենական ուսումն յընդարձակագոյն միտս զգիտութիւնն զայն յայտ առնէ, որ յհանգամանաց շարժելոյ մարմնոց ճառէ եւ զնոցին զօրութեանց, որովք մարմինք ի միմեանս ազդեցութիւնս կատարիցեն, նոյնպէս եւ զմենքենայից եւ զդործեաց, որպէս զլծակաց, զճախարակաց, զանուոց, զերթաց եւ զմամլոց զպիտանութիւն եւ յհանգամանս ուսուցանէ: Ուսումնս այս ի փիւկեան-մաթեմատիկեան ուսմունսս պատշաճի, որպէս վերագոյն ի ճառս ուսողութեան ասացաւ: Կարեւոր եւ դիսաւոր մասունք սորին ուսման են, Ուսումն կայութեան (*statique*), որ է ուսումն հասարակակշիռ կշռոց մարմնոց հաստատնոց, Ուսումն զօրութեան (*dynamique*), որ ուսուցանէ զհանգամանս շարժման մարմնոց հաստատնոց, Ուսումն կայութեան ջրոյ (*hydrostatique*), որ ուսուցանէ զհասարակակշիռն կշիռ մարմնոց հեղեաց (*fluide*), Ուսումն զօրութեան ջրոյ (*hydrodynamique*), այսինքն է ուսումն շարժման մարմնոց հեղեաց, եւ մեւս եւս ուսումն Օղաչափութիւն անուանեալ, որ ճառէ զհանգամանայ օդոյ, իբրեւ

²⁰ Սովետական Հայաստան հանրագիտարան. Երևան, 1987, էջ 685:

²¹ *Մ*. Քաջունու (1823-1903) մասին տես Ս. А х в е р д я н, Р. С а р д а р я н. Мануель Каджун — армянский пропагандист естественных наук XIX века. — "Известия" АН АрмССР. Физика, т. 12, 1977. Ա. Փ ա շ յ ա ն. Երևելի հանրագիտակն ու հայրենասիր մանկավարժը. — «Սովետական Հայաստան», 1984, № 2, էջ 13-15:

մարմնոյ, իր իցէ ծանր եւ չոյծ եւ վարելի (*elastique*): Բայց ի միտս ան-
ձուկս մեքենական ուսումն կոչի միայն Ուսումն զօրութեան այս ինքն է
ուսումն հանգամանաց շարժման մարմնոց հաստատնոց, եւ մեքենագործ
անուանեալ կոչի ճարտարն, որ վիտիցէ զհանգամանս յօրինելոյ գործիս
ուսողութեան եւ փիւսկեան գիտութեան»²²:

Կարելի է միայն դարմանալ, և նաև հստատանալ, թե ինչպէս 25-ամյա
այդ վարդապետը, չունենալով բազային մասնագիտական կրթութիւն,
միայն մեխանիկական քննարկելիս ոչ միայն հստակ տվել է այդ գիտութեան
սահմանումը, այլև առանձնացրել դրա հիմնական բնագավառները՝ ստա-
տիկական, դինամիկական, հիդրոստատիկական, հիդրոդինամիկական, աէրոդինամի-
կական...

Ինչպէս նշեցինք, մինչև Մ. Գարագաշյանի հիշյալ գրքի լույս տեսնելը
հայատառ տպագիր դրականութեան մեջ չի եղել բնական գիտութիւնները
առանձին բնագավառների նկարագրութեանը և վարդապետ մանրագնին
պատմութեանը նվիրված որևէ ուսումնասիրութիւն: Եղածները մեծ մա-
սամբ հանրագիտարանային բնութիւն են²³:

Այս իմաստով «Նկարագիր ուսմանց»-ը նաև մի յուրօրինակ հան-
րագիտարան է բնական գիտութեան որևէ բնագավառի մասին սլաս-
մական տեղեկութիւններ քաղելու համար: Սա ամենևին էլ չի նշանա-
կում, որ Մ. Գարագաշյանի առաջադրած բոլոր դրոյթներն այսօր վերջ-
նականապէս ընդունելի են: Այսպէս, ըստ Մ. Գարագաշյանի, քիմիայի
պատմութեան սկզբնական շրջանը դեռևս լրիվ սլարգված է: Հեղինակը
նշել է եգիպտացիները, հույները և արաբները՝ վաղ անցյալում քիմիա-
կան գիտելիքներին քաջատեղյակ լինելու իրողութիւնը: Ըստ Գարագաշ-
յանի, արաբները ժառանգելով քիմիական գիտելիքները, եվրոպացիներն
այն ապահովեցին դիտական պատշաճ մակարդակով: Հեղինակը նշել է
այն երկրները, որտեղ քիմիան բուռն զարգացում է ապրել՝ Անգլիա, Գեր-
մանիա, Ֆրանսիա, Իտալիա և Իսպանիա: Նշված երկրները միայն Իսպա-
նիան է, ուր Մ. Գարագաշյանի նշած ժամանակահատվածում քիմիա-
կան գիտութիւնը բարձր մակարդակի վրա չի եղել: Գոնե մեզ հայտնի է
այդ ժամանակաշրջանում ստեղծագործած որևէ ականավոր քիմիկոս:

Բժշկութեան պատմութիւնը քննարկելիս Մ. Գարագաշյանը չափա-
դանց դիպուկ է ներկայացրել հույն բժիշկ և փիլիսոփայ, անտիկ բժշկութե-
ան բարեփոխիչ Հիպոկրատի (460–377) մատուցած ծառայութիւնը. «Ընդ
այս ժամանակս ել եկաց ի միջի Հիպոկրատ, Հերակղեայ որդի, ութուտաս-
ներորդ յԱսկղեպեայ, ծագեալ ի Պոդաղիբեայ յորդոյ Ասկղեպեայ: Սա իւ-
րովն սուր հանճարով եւ մեղմական բարուքն եւ անչափ փութովն, լեալ
որդի բժշկի եւ անդստին ի մատաղական տիոցն զարգացեալ ի բժշկաց մի-
ջի, այնչափ յօժարութիւն վասն այսր ճարտարութեան ստացաւ անձին, զի

²² Մ. Գ ա ռ ա գ ա շ յ ա ն. նշվ. աչիւ., էջ 254-255:
²³ Խ ա չ ա տ ու ը ք է ը գ ը ու մ ց ի. Համառոտական իմաստասիրութիւն. հ. 1–2,
Վենետիկ, 1711: Ա ը ս ե ն Դ ա յ ի ը Կ ո ս տ ա ն դ ն ու լ ս ե ց ի. Գիրք սահ-
մանաց յոգնադիմի իրողութեանց. 4. Պոլիս, 1749: Հ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Տեսարան աշ-
խարհի, Վենետիկ, 1810: Մ. Բ ժ շ կ յ ա ն. Ճեմարան գիտելեաց. Վենետիկ, 1815: Ս ե -
ր ո վ բ ե Կ ա ը ն ե ց ի. Ծաղիկ գիտութեան. Մոսկվա, 1819: Մ. Ս ա ղ ա թ ե լ յ ա ն.
Համառոտ բնական գիտութեանց. Վիեննա, 1842:

ամենայն վիճակում եւ ջան նորա այս եւեթ էր, ի նոր իմն կերպարանս ածել զբժշկութիւնն կէ ի նորոգ կատարումն տարեալ հասուցանել, եւ եթէ ի դէպ իցէ ասել, յաստուածական իմն կարգս համբառնալ զայն»:

«Նկարագիր ուսմանց»-ի բնական գիտութիւններին նվիրված բաժնում ոչ մի տող չկա որեւէ հայ գիտնականի մասին: Այս փաստը անչափ տարօրինակ է մեզ համար: Եթե Ֆիզիկայի և քիմիայի բնագավառներում մինչև XIX դ. առաջին կեսը հայերս չենք ունեցել ականավոր գործիչներ, ապա մաթեմատիկայի, բժշկութեան և փիլիսոփայութեան բնագավառներում մինչև հիշյալ ժամանակները եղած երեւելի հայերի անունները, կարծում ենք, Մ. Գարագաշյանին ծանոթ սկետք է լինեին: Չեն հիշատակված անգամ Անանիա Շիրակացու, Մխիթար Հերացու, Ամիրգոպլայթ Ամասիացու, Գրիգոր Տաթևացու և այլոց անունները:

Խիստ յուրօրինակ է «Նկարագիր ուսմանց»-ի վերջին՝ է գլուխը, որը վերնագրված է «Նուիրական ուսմունք»: Դրանում ընդգրկված են հետևյալ ենթաբաժինները. «աստուածաստութիւնն, մեկնողական, տեղեկութիւնն հարցն գրոց եւ կանոնական իրաւունք: Գիրքը եղբայրակցում է «Եկեղեցական պատմութիւնն» ենթաբաժնով: Այն շոշափում է միայն քրիստոնյա եկեղեցուն առնչվող հարցերը, որոնց հեղինակը նվիրել է ընդամենը ութ էջ: Այստեղ է, որ նա շատ սեղմ գծերով անդրադարձել է այն հայ պատմիչներին, որոնք իրենց գործերում այս կամ այն չափով քննարկել են հայ եկեղեցուն առնչվող խնդիրները. Աղաթանգեղոս, Փավստոս Բուղանգ, Կորյուն, Մովսես Խորենացի, Եղիշե, Ստեփանոս Տարոնացի, Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամուել երեց, Մխիթար Այրիվանցի, Հովհան Կաթողիկոս:

«Նկարագիր ուսմանց»-ը եղբայրակցում է չորս էջանոց «Յաւելուած»-ով, ուր քննարկված են արհեստներին և վաճառականութեանն առնչվող հարցերը: Հեղինակը կարևորել է դրանց դերը մարդկանց բնականոն դործունեութիւնն ապահովելու համար. «Յաւել քան գրովանդակել զճառս նկարադրի. ուսմանց, չէ պարտ առանց յիշատակելոյ թողուլ զերկոսին կարեւորագոյն ճարտարաւթիւնս, որ թէպէտ եւ չիցեն ուսումն եւ գիտութիւն, սակայն առ ի կատարեալ լինել եւ գալ ի կերպարանս՝ ուսումն եւ գիտութիւն պահանջեն: Ջարուեստագիտութենէ եւ վաճառականութենէ են բանքս: Կարեւոր հարկ եւ շահ օգտի սոցա ազգի մարդկան քան զլոյս միջօրէի պայծառագոյն եւ լուսաւորագոյն է, վասն այնորիկ աւելորդ իսկ համարիմք երկայն բանս տողել: Ամենայն սկետք մարդոյ, կերակուր եւ հանգերձ եւ բնակութիւնն եւ կազմած այլովքն հանդերձ, ի ճարտարութենէ արուեստագիտութեան յարդարին. իսկ վաճառականութիւն պիտոյիցն լնու եւ զկարիս կարօտութեանն բառնայ»:

«Նկարագիր ուսմանց»-ի վերջին էջում կա խիստ կարևոր մի ցանկ, ուր ընդգրկված են այն մեծահարուստ հայազգի երեւելիների անունները, որոնք իրենց նյութական միջոցներով 1843–1845 թթ. նպաստել են «Արամյան ընկերութեան» գրահրատարակչական դործին: Ահա այդ ցանկը. Գրիգոր Աբելյան, Հովհաննես Աղարյան, Աբրահամ Ալավերդյան, Անտոն Ալավերդյան, Աբրահամ Ասրոյան, Ստեփան Ասրոյան, Մկրտիչ Բավլո, Եղուսաբեթուսուլուսո հասարակութիւն, Պետրոս Յուսուֆյան, Պետրոս Ջեմ-

պերեքչյան, Խաչատուր Լազարյան (Լազարև), Հովհաննես Կարապետյան, Վիգեն Համսոն, Գրիգոր Ճևահիրճյան, Բուզանդ Մանասերյան, Մ. Վ., Ղազարոս Նիկողոսյան, Ռաֆայել Ղարամյան, պարոն Ալեքսանդր Ասպետ, Սամոցուվարի Հասարակություն, Հակոբ Սարգսյան, Ռուդոլֆ Սարգսյան և Հակոբ Չելեպի Տյուզյան:

«Նկարագիր ուսմանց»-ում Մ. Գարագաշյանը, ինչպես դա հատուկ է Մխիթարյան միաբանության գրեթե բոլոր բնագետներին և բնագիտության պատմությամբ զբաղվողներին, անգրագարձել է բնագիտական մի շարք տերմինների հայկական համարժեքները ստեղծելու խնդրին: Հարկ է նշել, որ մինչև «Նկարագիր ուսմանց»-ի լույս տեսնելը, Մխիթարյանների հրատարակած մի շարք մենագրություններում, դասագրքերում, հանրագիտարանում, ինչպես նաև «Բազմավեպի» առաջին համարներում նկատելի են այդ ուղղությամբ կատարված աշխատանքները:

Բերենք Մ. Գարագաշյանի հիշյալ գրքում բնագիտական որոշ տերմինների մի քանիսի հայկական համարժեքները. բարեգիտություն (Ֆիզիոլոգիա), բովանդակածով (սիստեմ), ուսողություն (մաթեմատիկա), համարողություն (թվաբանություն), լուծում (անալիզ), նկատություն (թեորեմ), սուրբ (մաքուր), արդեանց (պրակտիկ), երեքանկյունաչափություն (եռանկյունաչափություն), ջրբաշխություն (հիդրավլիկա), տեսողություն (օպտիկա), լսողություն (ակուստիկա), փյուսկյան (ֆիզիկա), համատարած օդոյն (մթնոլորտ), խտացուցիչ (կոնդենսատոր), նյարդ (ներվ), ընծայություն (ինդուկցիա), ուսումն կայություն (ստատիկ), ուսումն գորություն (դինամիկ), վարելի (էլաստիկ), թանձրություն (զանգված), քրեական նյութ (միներալ), վերանալոյ (սուբլիմացիա), ուսումն հերձանելոյ (անատոմիա) և այլն:

Չափազանց տարողունակ, ինչու էլ, նաև վիճարկելի է համաշխարհային գնահատման արժանացած բնագիտական տերմինների լրիվ կամ մասնակի հայացման խնդիրը: Կարող ենք հավաստել միայն, որ Մ. Գարագաշյանի առաջարկած հայկական բնագիտական տերմիններից, ինչպես և սպասվում էր, քչերը միայն հետագայում արժանացան համընդհանուր ճանաչման²⁴:

«Նկարագիր ուսմանց»-ին առաջին անդրադարձողներից մեկը Մ. Գարագաշյանի աշակերտներից Ա. Չոպանյանն է. «Ինքն էր, որ Մխիթարյան տան մեջ գտնված միջոցին, Քաթրճյանի հետ կատարեց ոսկեգարյան հայերենի սահմանումին կարևոր գյուտը և հետո դայն բացատրեց իր «Նկարագիր ուսման» սիրուն (ընդգծումը մերն է – Ա. Փ.) գործին մեջ»²⁵:

Խորհրդային Հայաստանում «Նկարագիր ուսմանց»-ին առաջինն անգրագարձել է մատենագետ Հ. Դավթյանը. «Ավելի հմտորեն է կազմված Մատաթիա Գարագաշյանի «Նկարագիր ուսմանց»-ը (Վիեննա, 1845): Այստեղ հարուստ նյութ և ուշագրավ մտքեր կան մանավանդ հայոց լեզվի, պատմության վերաբերյալ: Ներածությունից հետո իր գրքի առաջին մասը

²⁴ Միայն քիմիային նվիրված հայկական տերմինների մասին մանրամասն տես Հ. Այվազյան, Ս. Գրիգորյան. Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրները. Երևան, 1998, 130 էջ:

²⁵ Ա. Չոպանյան. Դեմքեր. Փարիզ, 1929, էջ 80:

Գարագաշյանը նվիրել է «Գեղեցիկ ուսմունք»-ներին՝ դպրութուն, քերականութուն, բանաստեղծություն, վիպասանություն, պատմություն, ճարտարագիտություն, իսկ երկրորդ մասը, որ նա վերնագրել է «Գիտութիւնք», նվիրված է մաթեմատիկային, քիմիային, ֆիզիկային, բնագիտությանը, բժշկությանը, իրավաբանությանը և վերջում՝ աստվածաբանությանը»²⁶:

Այս տողերը գրված են 1971 թ.: Հինգ տարի անց «Նկարագիր ուսմանց»-ի մասին տպագրվել է հաջ թե ինչ. «Դեռևս Հ. Գաթըրճյանի և Ղ. Հովնանյանի հետ թարգմանած Բոսուետի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» (1841) աշխատության մեջ Գարագաշյանը կիրառել է դասական հայերենի իր ելակետը, ըստ որի, գրաբարը բաժանել է դասական և ետդասական շրջանների: «Նկարագիր ուսմանց» (1845) աշխատության մեջ Գարագաշյանը տվել է այդ սկզբունքի և դասական հայերենի նկարագիրը, անդրադարձել առաջին թարգմանությունների և պատմիչների լեզվին»²⁷: Այսքանը «Նկարագիր ուսմանց»-ի մասին: Ոչ մի խոսք բնական դիտություններին նվիրված 150 էջերի մասին...

«Նկարագիր ուսմանց»-ին հպանցիկ, սակայն հավուր պատշաճի անդրադարձել է հայ փիլիսոփայության մտքի պատմության երախտավորներից Ա. Թևոսյանը. «Հայագիտության խնդիրներին զուգահեռ Գարագաշյանը Մխիթարյան միաբանության վանքում գրագվում է նաև փիլիսոփայության, ճարտասանության, գիտությունների հիմունքների և նրանց պատմության հարցերով (ընդգծումը մերն է – Ա. Փ.): Իր հետազոտություններին արդյունքները նա ամփոփել է «Արհեստ ճարտասանության (1843) և «Նկարագիր ուսմանց» (1845) աշխատություններում, որոնք ժամանակին զգալի գեր են խաղացել հայ երիտասարդությանը համաշխարհային գիտության և կուլտուրայի նվաճումներին հաղորդակից դարձնելու խնդրում»²⁸ (ընդգծումը մերն է – Ա. Փ.):

Հիրավի, մեծ և անուրանալի է Մ. Գարագաշյանի դերը համաշխարհային բնագիտական մտքի զարգացման պատմությունը մանրակրկիտ գիտական վերլուծության ենթարկելու գործում: Մեկ անգամ ևս չեչտենք, որ «Նկարագիր ուսմանց»-ը լույս է տեսել 1845-ին, երբ հայատառ գրականության էջերում գրեթե բացակայում էին բնագիտական միտքը լուսաբանող ուսումնասիրությունները: Ճիշտ է, Մ. Գարագաշյանը իր գրքում չի անդրադարձել որևէ հայ բնագետի, բժշկի կամ փիլիսոփայի, այնուհանդերձ «Նկարագիր ուսմանց»-ը փայլուն վկայությունն է այն իրողության, որ հայ հեղինակը հայ ուսանողին, մտավորականին և մանկավարժին ծանոթացնում և ներկայացնում է համաշխարհային բնագիտության նվաճումները: Այս իմաստով միանգամայն համամիտ ենք Ա. Թևոսյանի արտահայտած չափազանց ընդգրկուն մտքին. «Հայ բնագիտական մտքի զարգացման ու բնագիտության ժողովրդականացման մեջ որոշակի գեր են

²⁶ Հ. Գ ա ղ թ յ ա ն. նշվ. աշխ., էջ XXI:

²⁷ Պ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, է. Ռ շ տ ու ն ի. Գարագաշյան Անտոն (Մատաթիա) Գրիգորի. – «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 699:

²⁸ Ա. Թևոսյան. նշվ. աշխ., էջ 107:

խաղացել լուսավորիչ-մասձողներ Ն. Ռուսինյանը, Գ. Կոստանդյանը, Ա. Գարագաշյանը, Ս. Պալասանյանը, Ստ. Նազարյանը և ուրիշներ»²⁹:

Հարկ է նշել, որ «Նկարագիր ուսմանց»-ի լույս տեսնելու պահին վերը հիշատակված լուսավորիչ-մտածողներից և ոչ մեկը, բացառությամբ Մ. Գարագաշյանի, բնագիտության այս կամ բնագավառի նկարագրությանը նվիրված որևէ ուսումնասիրություն դեռևս չէր հրատարակել:

Մ. Գարագաշյանի դիտական ժառանգությունը, այդ թվում և «Նկարագիր ուսմանց»-ը մեկ անգամ ևս հավաստում է պատմական այն իրողությունը, որ Մխիթարյան միաբանությունը հիմնադրման առաջին իսկ օրվանից՝ հավատարիմ մնալով միաբանության հիմնադիր, երջանկահիշատակ Մխիթար Աբաստացու սկզբնավորած գործին, միաժամանակ դարձավ յուրօրինակ մի ոսպնյակ, որում բեկվեց եվրոպական գիտության լույսը իր անդրադարձներն ուղղելով դեպի գաղթօջախները և Հայաստան:

МАТАТИЯ ГАРАГАШЯН И ЕГО ТРУД "ОПИСАНИЕ УЧЕНИЙ"

АСАТУР ПАШАЯН

Резюме

Крупный мыслитель, философ, языковед, педагог, основоположник армянской исследовательской историографии Мататия Гарагашян (настоящее имя Антон Берберян, 1818–1903) с 1836 до 1856 г. был членом конгрегации венских мхитаристов. Начиная с 1856 г. до конца жизни занимался плодотворной научно-педагогической деятельностью в Константинополе. В 1845 г. в типографии венских мхитаристов вышла в свет на грабаре книга М. Гарагашяна "Описание учений" (364 с.). В этом труде впервые в армянской действительности изложена история развития общественных и естественных наук со времени их зарождения до 40-х годов XIX столетия. Книга состоит из двух частей. Первая часть – "Изящное учение" посвящена вопросам грамматики, истории, литературы, красноречия (ораторского искусства). Во второй части книги рассмотрены следующие науки: математика, арифметика, философия, физика, химия, механика, биология, медицина, теология, правоведение. В 1861 г. в Вене, на ашхарабаре, вышел в свет труд Егише Гафтанчяна "Содержание наук и искусств" (186 с.), который по своему содержанию очень близок к "Описанию учений" М. Гарагашяна. Книга "Описание учений" своей исключительностью привлекает внимание исследователей наследия естествоведов конгрегации мхитаристов, и в разное время к ней обращались А. Чопанян, Н. Акинян, Гр. Шакарян, А. Тевосян, Г. Давтян, Г. Габриелян, Э. Арутюнян, А. Пашаян.

²⁹ Նույն տեղում:

MATATIA GARAGASHYAN AND HIS "DESCRIPTION OF SCIENCES"

ASATUR PASHAYAN

S u m m a r y

The paper deals with the well-known historian, philosopher, linguist, pedagogue and founder of Armenian analytic history Matatia Garagashyan (the true name - Anton Berberyan (1818–1903)) as well as the analysis of his monograph "Description of Sciences". In 1836-1856 M. Garagashyan was a member of Mekhitarist Congregation of Venice. Starting from 1856 until the end of his life he was engaged in productive pedagogical activity in Constantinople. The "Description of Sciences" (364 p.) was published in Grabar in the printing house of Mekhitarist Congregation of Venice, in 1845. In the monograph essence of public and natural sciences and the history of their evolution are discussed from the beginning of their foundation till the 40s of the 19th century. The work consists of two parts. The first one (titled "Fine Sciences") is devoted to grammar, history, literature and oratorical art. The article discusses the second part more in detail devoted to the following sciences: mathematics, philosophy, arithmetic, physics, chemistry, mechanics, biology, medicine, theology and jurisprudence. Until the publication of "Description of Sciences" in 1845 there was no analogical book to it in the Armenian reality. Only after 16 years, in 1861, again in Venice (but this time in modern Armenian (Ashkharhabar)) Yeghishe Gaftanjyan published his "Contents of Science and Art" (186 p.) close to "Description of Sciences" by the content. Some members of Mekhitarist Congregation discussed the "Description of Sciences", in different times this investigation was discussed by A. Chopanyan, N. Akinyan, H. Shakaryan, A. Tevosyan, H. Davtyan, H. Gabrielyan, E. Harutyunyan, A. Pashayan.